բնակիչների մեջ՝ մի կողմ թողած ռուսական տիրապետության ժամանակ ուրիշ վայրերից (գլխավորապես Իրանից) այնտեղ վերահաստատված բնակիչներին։ Այս կարևոր ճշտումները Շանտրը չի անում, հավանական է բավականաչափ տվյալներ հավաքած չլինելով։ Իր հետազոտական ամփոփման մեջ՝, որը նա լույս է ընծայել Զանգեզուր-Մեղրի իր այցելությունից հետո, նա ընդգծում է առհասարակ հայկական տիպի միօրինակությունը ընդարձակ տերիտորիայի վրա և բնորոշում է տիպը որպես բրախիկեֆալ (hypsibrachicéfale) լայնագլուխ, որը տալիս է տղամարդկանց գանգի համար միջինը 86,65 սմ, իսկ կանացի գանգի համար 84,65 (երկու սեռերի միջինը 85,55), գլուխը բարձր և կլոր, քիթը երկար (64,81), ուղիղ, հաճախ կորնթարդ, կախ ընկած՝ կլորացրած վերջածայրով[2], բերանը ավելի հաճախ մեծ քան փոքր, երեսի լայնությունը միջին (mésatifaciale), հասակը 167,00 սմ. և շեշտում է, որ ուժեղ է հրեական հատկանիշների կրկնությունը, առանձնապես Երևանից մինչև Մեղրի[3]։ Սակայն թե ի՞նչ շեղումներ ունի Զանգեզուր-Ալանգյազի լեռնաշղթայից արևելք բնակվող հայկական տարրը ընդհանուր տիպից, այդ ամփոփման մեջ չի բերված։

Մեր գիտարշավների ժամանակ կատարած դիտողությունները թույլ են տալիս զանազանելու զանգեզուրյան տիպը Լոռվա տիպից մազերի ավելի մուգ գույնով, համեմատական կարճահասակությամբ, քթի ստորին մասի լայնությամբ, աչքերի մուգ շագանակագույն գույնով, խիտ հոնքերով։ Այս հատկանիշներով նա ամենից ավելի մոտենում է Լեռնային Ղարաբաղի հայկական տիպին։ Տվյալ մերձավորությունը ցայտուն կերպով դրսևորվում է և կենցաղային, մանավանդ զգեստի և բնակարանի, ձևերի և բարբառի մեջ՝։

Զանգեզուրի հայերի մարդաբանական բնութագրման համար կարող են օժանդակ կողմնակի նյութ ծառայել այն եզրակացությունները, որոնց հանգել է Մոսկվայի համալսարանին կից հիմնված Մարդաբանական ինստիտուտի դեկավար պրոֆ. Վ. Վ. Բունակը՝ հենվելով 1928 և 1932 թթ. Ղարաբաղում և տարբեր ժամանակներում դրանից առաջ և հետո Հայաստանի այլ վայրերում, թե Սովետական Հայաստանի սահմաններում և թե տաճկական գավառներում կատարած չափումների վրա։ Նա իր չափագրական աշխատանքները սկսել է 1913 թ.։ Համաշխարհային պատերազմի ժամանակ այցելած լինելով տաճկական գավառները, նա հնարավորություն է ունեցել հավաքել և Մոսկվա տեղափոխել հայրենի վայրերից տեղահան արած և ճանապարհին սովամահ եղած հայերի չորացած դիակներից իր վերցրած 178 գանգերը և նրանց վրա կատարել բազմակողմանի ուսումնասիրություններ, որոնց արդյունքները նա ամբողջացրել է իր 1927 թ. հրատարակած «Crania armenica»— «Հայկական գանգերը» գրքի մեջ։ Այդ նյութի հիման վրա նա կառուցել է իր տեսությունը արմենոիդ մարդաբանական տիպի հիմնական հատկանիշների մասին, այդ տիպի տերիտորիալ տարածման և գենեզիսի՝ ծագման մասին։ Ավելի ուշ,

---

[1] **M. Ernest Chantre**, Rapports sur une Mission scientifique en Asie Mineure, specialement en Cappadocie (1893—1894) Paris, 1896 (Extrait des Nouvelles Archives des Missions scientifiques, v. VII), էջ 15 և հետևյալները։

[2] Convexe, abaissé.

[3] Այսինքն՝ Զանգեզուր-Կոնգուր-Ալանգյազի լեռնաշղթայից արևմուտք։

[4] Ղարիբյան Արարատ, Հայոց լեզվի ուսումնասիրությունը, 1937, Ներածություն, էջ 107։